

Հաագա/Նյու Յորք, ապրիլի 2, 2014

Հայաստանի Հանրապետության նախագահ

Պարոն Սերժ Սարգսյանին

Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը Հայաստանի կողմից վավերացնելու վերաբերյալ

Ձերդ գերազանցություն,

Ուստիվ ունենք Ձեզ գրելու «Միջազգային քրեական դատարանի համար» կոալիցիայի անունից, որը 150 երկրում գործող 2,500 հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց է և խրախուսում է արդար, արդյունավետ և անկախ դատարանի գործունեությունը, ինչպես նաև՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների գոհերի արդարադատության մատչելիությունը:

Որպես 2014թ. ապրիլ ամսին Համընդհանուր վավերացման քարոզարշավի գործողություններից մեկը, Կոալիցիան խորին հարգանքով կոչ է անում Հայաստանին ավելի գործուն քայլեր ձեռնարկել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու ուղղությամբ:

Ձերդ գերազանցություն, Հայաստանը բազմաթիվ անգամ աջակցություն է ցուցաբերել Հռոմի կանոնադրության հիման վրա ստեղծված միջազգային արդարադատության համակարգին՝ ակտիվ մասնակցություն ունենալով Միջազգային քրեական դատարանի (ՄԲԴ) հիմնադրման վերաբերյալ լիազոր ներկայացուցիչների հանդիպմանը 1998 թվականին, որին հետևել է 1999 թվականի հոկտեմբերի 1-ին Հայաստանի հանրապետության կողմից Հռոմի կանոնադրության ստորագրումը:

Մակայն անպատժելիության վերջնակետը դնելու համար անհրաժեշտ է որեզրել որոշակի միասնական պարտավորություն, որը հնարավոր է միայն Հռոմի կանոնադրության վավերացումից և լիարժեք կատարումից հետո, ինչպես նաև՝ միջազգային արդարադատության համակարգի հետ համատեղ աշխատանքներ իրականացնել՝ ապահովելու, որ բռնարարները, որտեղ էլ որ լինեն, ենթարկվեն պատասխանատվության:

Ձերդ գերազանցություն, Հայաստանը մի շարք առիթներով հայտնել է, որ պատրաստ է աջակցել անպատժելիության վերացմանը: 2010թ. մայիսին ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական վերանայման ժամանակ Հայաստանը ընդունել է Հռոմի կանոնադրությունը վավերացնելու առաջարկությունը: Նույն տարվա դեկտեմբերին կայացած ՄԲԴ-ի անդամ պետությունների Ասամբլեայի ժամանակ Հայաստանը արձագանքել է ԵՄ-ի անունից արված հայտարարությանը և վերահաստատել Հռոմի կանոնադրությունը վավերացնելու իր պատրաստակամությունը:

Միջազգային արդարադատությանն աջակցելու Հայաստանի պատրաստակամության մասին նաև շեշտվեց Ձերդ գերազանցության հայտարարության մեջ՝ 2011թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանի ժամանակ: «Մենք միանշանակորեն ողջունում ենք միջազգային հանրության մեջ արմատավորված հստակ կեցվածքը, որը բացառում է ցեղասպանության և մարդկության դեմ իրականացրած այլ հանցագործություններ կատարողների նկատմամբ որևէ անձեռնմխելիության կամ ներման հնարավորությունը: ...Հայաստանը շարունակելու է գործադրել իր ողջ կարողությունները ցեղասպանությունների ճանաչման, դատապարտման և կանխարգելման նպատակով»¹:

Անցած տարվա ապրիլ ամսին ՀՀ կառավարությունն իր հետաքրքրությունը և աջակցությունը ցուցաբերեց ՄՔԴ-ի նկատմամբ Երևանում կազմակերպված՝ «Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը և Հայաստանի հանրապետությունը. խնդիրներ և վավերացման հեռանկարներ» խորագրով գիտաժողովի ժամանակ: Արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբեյանի, Արտաքին գործերի նախարարի տեղակալ Զոհրաբ Մնացականյանի, Արդարադատության նախկին նախարար և ներկայումս ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի մասնակցությունը գիտաժողովին վկայում է Հայաստանի՝ միջազգային արդարադատության նկատմամբ հանձնառության մասին:

Մենք լիովին գիտակցում ենք, որ Սահմանադրական դատարանի 2004թ. որոշումը մնում է խոչընդոտ Կոնվենցիայի վավերացման համար: Այդ պատճառով մենք կոչ ենք անում Ձեզ ապահովել, որ վերջերս ձևավորված Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը հաշվի առնի Դատարանի որոշման մեջ նշված այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել վավերացումը խոչընդոտող իրավական նախապայմանների վերացման ուղղությամբ, որպեսզի Հայաստանը շուտով կարողանա հայտարարել այս կարևոր դատական մարմնին իր անդամակցության մասին:

Ձերդ գերազանցություն, 122 պետություն միացել է ՄՔԴ-ին, բայց միայն Դատարանի համընդհանուր ընդունման շնորհիվ մենք կկարողանանք ապահովել, որ արդարադատություն իրականացվի առավելապես ծանր հանցագործությունների վերաբերյալ՝ անկախ այն բանից, թե որտեղ են դրանք տեղի ունեցել: Այսպիսով, Հայաստանի կողմից Հռոմի կանոնադրության վավերացումը ոչ միայն կարևոր է Դատարանի համընդհանուր ընդդատության, լեգիտիմության և աջակցության համար, այլ նաև՝ կվկայի հստակ հանձնառություն անպատժելիության մթնոլորտի վերացման և ժողովրդավարության, պատշաճ կառավարման, արդարադատության և օրենքի գերակայության զարգացման ուղղությամբ:

Հույս ունենք մոտ ապագայում Հայաստանը տեսնել ՄՔԴ-ի անդամ պետությունների շարքում:

Հարգանքով,



Ելենա Պիա-Կոմելյա
Ծրագրի ղեկավար
ՄՔԴ-ի համար կոալիցիա



Քիրստեն Միերսթերթ Դուխենար
Հաագայի քարտուղարության ղեկավար
Կոալիցիայի՝ Եվրոպական
տարածաշրջանի համակարգող

¹ <http://gadebate.un.org/66/armenia>

Պատճենը՝

Պարոն Տիգրան Սարգսյանին, Վարչապետ

Պարոն Էդվարդ Նալբանյանին, Արտաքին գործերի նախարար

Պարոն Հրայր Թովմասյանին, Արդարադատության նախարար

Պարոն Գարեն Նազարյանին, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան

Տիկին Չյունիկ Աղաջանյանին, Նիդերլանդների թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան

Պարոն Ավետ Ադոնցին, Բելգիայի թագավորությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան

Պարոն Շարլ Ազնավուրին, Եվրոպայում ՄԱԿ-ի գրասենյակում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան

Պարոն Արման Կիրակոսյանին, ԵԱՀԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, դեսպան

Պարոն Արմեն Պապիկյանին, Եվրոպայի խորհրդում ՀՀ-ի մշտական ներկայացուցիչ, դեսպան

Պարոն Հովիկ Աբրահամյանին, ՀՀ Ազգային ժողովի նախագահ

Պարոն Գագիկ Հարությունյան, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ